

~~RK
8989
X 882~~

Hamerashkhoutiun Hayi
Khentir

A
A
0
0
0
7
8
4
7
6
5
0



UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY



THE LIBRARY
OF
THE UNIVERSITY
OF CALIFORNIA
LOS ANGELES

ԱՆԿԱԽ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

No. 1.

ՀԱՄԵՐԱԾԽՈՒԹԻՒՆ

ՀԱՑԻ ԽՆԴԻՐ



1908

ՊՕՍԹԸՆ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՏՊԱՐԱՆ

UNIV. OF CALIF. LIBRARY, LOS ANGELES

5


ԱՆԿԱԽ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

No. 1.

1-2

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻ ԽՆԳԻՐ



1908

ՊՕՍԹԸՆ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Կուսակցական մամուլին այն մասը՝ որ իր շահերուն ի վնաս պիտի նկատէ ներկայ հրատարակութիւնը՝ գիտենք թէ՛ անվայել լուտանքներու ինչ տարափով պիտի ողջունէ անոր հրապարակումը :

Նախապէս կը յայտնենք մեր խորին արհամարհանքը՝ այդպիսի ընդունելութեան հեղինակներուն :

10 յունուար , 1908
Նիւ-Եօրք

Ս . Ս .

SRLF
YRL

07-20 X-7290

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՀԻՆ-ՀՆՉԱԿԵԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՓՐՕՎԻՏԷՆՍԻ ՄԷՋ

1906 ԴԵԿՏԵՄԲԵՐ 24-ԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ

ՀԻՆ-ՀՆՉԱԿԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ

ԵՒ

ՄԱՍՆԱՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Լինի պատգամաւորը չընդունուիր. ան-
յայտ են պատճառները:

2. — Թրոյի մասնաճիւղէն նամակ մը Գոր-
ծադիր Յանձնախումբին: Մասնաճիւղը չի ճանչ-
նար ո՛չ կեդրոն և ոչ Գործադիր Յանձնախումբ:
Չորս օր վերջ երբ Թրոյի մասնաճիւղի կողմէն
ղրկուած պատգամաւորը կը ներկայանայ ժողո-
վին՝ իրմէ բացատրութիւն կը պահանջուի նամա-
կի մասին: Ան՝ ամբողջ պատասխանատուութիւ-
նը կը նետէ մասնաճիւղի վարչութեան վրայ: Կը
ստիպուին Թրոյի Մասնաճիւղին հեռագրել. —
«Ձեր նամակը ես կ'առնէ՞ք, և ո՞վ է ձեր պատ-
գամաւորը:» Նամակը քննութեան ենթարկուե-

լով՝ կը յայտնուի որ գրողը նոյն ինքն պատգամաւորն է։ Պատգամաւորական ժողովը կը փակուի, առանց տեղեկացնելու թրօյին։

3. — Պօսթընէն՝ երեք ընկերներու կողմէն կը ներկայանայ մէկը, որ կը գործէ անհաստապէս, բերանացի, առանց անհրաժեշտ վաւերաթուղթերն ունենալու։

4. — Լինի խնդիրը։ Անդրէասեանի յայտարարութեամբ Լինի Մասնաճիւղը կեդրոնին հակառակ գործած ըլլալով՝ լուծուած է։ Մասնաճիւղին կողմէ եկած պատգամաւորը՝ Մելտոնեան՝ բացատրութիւն կը պահանջէ, խնդրելով քննութիւն կատարել։ Անոր կը հակառակին վարագրատ և Անդրէասեան։ Միւս պատգամաւորները կը պնդեն թէ՛ Լինը պէտք է որ ձայն ունենայ։ Ժողովը կը խանգարուի։ Լինի Մասնաճիւղը կը լուծուի և իր գոյքերը (?) կը յանձնուին Փրովիտէնսի Մասնաճիւղին։ Երկու երեք օր վերջը ժողովը բանալով՝ Գործադիր Յանձնախումբը կը յայտարարէ. — «Մենք ժողովը չպիտի բանայինք, սակայն բարդութիւններու տեղի շտալու համար՝ կը բանանք ժողովը, որ մեր իրաւասութենէն բարձր է» (?)։ Կրկին Լինի խնդիրը մէջ կը բերուի։ Այս անգամ պատգամաւորները Լինին աննպաստ քուէ կուտան։ Լինի պատգամաւորը կը մեկնի, խնդրի վերջնական լուծումը յանձնարարելով կեդրոնին։

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Պրանտֆըրտէն (Քանատա) պատգամա-

ուր Համբարձում Արզումանեան կը յայտարարէ
 Թէ՛ «Նրիտասարգ Հայաստան»ը փոշոցային
 Թերթ մը ելած է: Ասոր դէմ կը բողոքեն Վա-
 րազդատ և Անդրէասեան՝ ստիպելով ան՝ ետ
 առնել իր յայտարարութիւնը:

2. — Բողոքներ Անդրէասեանի դէմ. կ'ըսեն
 որ՝ եթէ Անդրէասեան Ամերիկայի գործիչ է՝
 պէտք է մեր ներքին կանոնադրէն դուրս շեղէ,
 իսկ եթէ Գործադիր Յանձնախումբի կողմէն է՝
 Թող պաշտօնապէս յայտարարէ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Հաշուեկշիռի քննութիւնը երեսն հանած է՝
 որ երկիրը դրամ շուղարկելէ զատ՝ 28 ՏԱԼԷՐ ԱԼ
 ԲԱՑ ԿԸ ՄՆԱՑ: Կը յայտնուի այն որոշումը, որու
 համաձայն իւրաքանչիւր մասնաճիւղ պարտա-
 դրուած է 15-ական տալէր յատկացնել «Մեծն
 Մուրատ» Ամերիկա բերելու համար: Կեդրոնէն
 եկած ներշնչումին համաձայն՝ Մուրատին Ամե-
 րիկա գալով՝ անոր դարագլուխ մը պիտի բացուի
 Հնչակեան կուսակցութեան համար: Դրամա-
 կան ճգնաժամէն նեղուած՝ կեդրոնը կը գրէ. —
 «Ընկերներ, քանի մը անպարտաճանաչ մասնա-
 ճիւղեր լուծեցինք»: Կեդրոնը նամակով մը կը
 գրէ. — «Ընկերներ, Ամերիկայի Գործադիր Յանձ-
 նախումբը Հնչակեան կանոնադրին դէմ կը գոր-
 ծէ: Պիտի լուծէինք գայն, ուրիշ խնդրի մը առ-
 Թիւ յետաձգեցինք»: Նոյն նամակին մէջ ըսուած
 է. — «Դրամ ղրկեցէք մեզի: յոյսերնիս ձեր վրայ
 է: Ռուսահայ Հնչակեանները հազիւ իրենց ծախ-

ուր Համբարձում Արզումանեան կը յայտարարէ
 Կ թէ՛ «Նրիտասարգ Հայաստան»ը փողոցային
 թերթ մը ելած է: Ասոր դէմ կը բողոքեն Վա-
 րազդատ և Անդրէասեան՝ ստիպելով ան՝ ետ
 առնել իր յայտարարութիւնը:

2. — Բողոքներ Անդրէասեանի դէմ. կ'ըսեն
 որ՝ եթէ Անդրէասեան Ամերիկայի գործիչ է՝
 պէտք է մեր ներքին կանոնադրէն դուրս շեղէ,
 իսկ եթէ Գործադիր Յանձնախումբի կողմէն է՝
 թող պաշտօնապէս յայտարարէ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Հաշուեկշիռի քննութիւնը երեսն հանած է՝
 որ երկիրը դրամ շուղարկելէ զատ՝ 28 ՏԱԼԷՐ ԱԼ
 ԲԱՑ ԿԸ ՄՆԱՑ: Կը յայտնուի այն որոշումը, որու
 համաձայն իւրաքանչիւր մասնաճիւղ պարտա-
 դրուած է 15-ական տալէր յատկացնել «Մեծն
 Մուրատ» Ամերիկա բերելու համար: Կեդրոնէն
 եկած ներշնչումին համաձայն՝ Մուրատին Ամե-
 րիկա գալով՝ անոր դարագլուխ մը պիտի բացուի
 Հնչակեան կուսակցութեան համար: Դրամա-
 կան ճգնաժամէն նեղուած՝ կեդրոնը կը գրէ. —
 «Ընկերներ, քանի մը անպարտաճանաչ մասնա-
 ճիւղեր լուծեցինք»: Կեդրոնը նամակով մը կը
 գրէ. — «Ընկերներ, Ամերիկայի Գործադիր Յանձ-
 նախումբը Հնչակեան կանոնադրին դէմ կը գոր-
 ծէ: Պիտի լուծէինք գայն, ուրիշ խնդրի մը առ-
 թիւ յետաձգեցինք»: Նոյն նամակին մէջ ըսուած
 է. — «Դրամ ղրկեցէք մեզի: յոյսերնիս ձեր վրայ
 է: Ռուսահայ Հնչակեանները հազիւ իրենց ծախ-

քերը կը գոցեն» : Շահումեան գրած է քարտով մը . — «Ընկերներ, աճապարեցէք դրամ դրկել կեդրոն, որովհետեւ սաստիկ նեղն է . ամբողջ յոյսը Ամերիկայի վրայ է» :

ԲՈՂՈՔ ՍԷՆԹ-ԼՈՒԻՉԷՆ՝

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ»

Սէնթ-Լուիցի Մասնաճիւղը կը բողոքէ Գործադիր Յանձնախումբին, թէ «ինչո՞ւ "Երիտասարդ Հայաստան"ը չի մեծնար, որու համար 41 տալէր ուզած էիք մասնաճիւղէս : Եթէ չմեծցաւ, ետ դրկեցէք մեր դրամը» :

ՊԱՅՔԱՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Երբ վերջերս մէկը բացատրութիւն կը պահանջէ Հնչակեանութեան բռնած դիրքի մասին՝ Դաշնակցութեան հանդէպ, հնչակեան կարեւորանհատ մը կ'ըսէ . — «Համերաշխութեան մասին մեր կեդրոնի կողմէն ուղղուած նամակին՝ Դաշնակցութեան Դ.-րդ Պատգամաւորական Ժողովը «վաղաժամ է» բառով պատասխանեց : Այս պատճառով ահա՛ մենք այս դիրքը բռնած ենք անոր նկատմամբ» :

* * *

Այս քաղուածները հասարակութեան կը յանձնուին, առանց ամենևին կուսակցական գաղտնիքներ հրապարակ հանելու միտումի, քանի որ, դիւրին էր շօշափել շատ քնքոյշ խնդիրներ, որոնց մասին սակայն, կատարեալ լուրթեամբ անցած ենք սոյն գրքոյկին մէջ :

Ժողովուրդը կուսակցութեան մը սեփականութիւն չի կրնար նկատուիլ. կուսակցութիւնն է՝ որ ժողովուրդին կը պատկանի: Հասարակութիւնը՝ որու դրամով ու լաւագոյն զաւակներու կեանքի զոհարերութիւններով կը պահուին բոլոր կազմակերպութիւններ՝ կատարելապէս իրաւունք ունի մանրամասն հաշուետուութիւն պահանջելու անոնցմէ՝ առանց, իհարկէ, անպայման գաղտնիք ճանչցուած խնդիրներու յուսարանումին: Եւ եթէ՝ կազմակերպութիւն մը իր իրական վիճակը կը ծածկէ ընդհանրութեան դիտող հայեացքէն, իր վէրքերն ու հիւանդութիւնը ստուերի մէջ պահելով, ու կը խուսափի հասարակական հաշուետուութենէ՝ պարզ է որ՝ անոր նկատմամբ ցոյց տուած վստահութիւնը պիտի չափաւորուի:

Վերոյիշեալ քաղուածները, անտարակոյս, ցնցող յայտնութիւններ պիտի ըլլան գիտակից հայութեան, ու նոյնիսկ հնչակեան կուսակցականներէն շատերուն համար, որոնց առջև «Տապանակ Ուխտի» մը գաղտնիքներու մշուշով ներկայացուած է միշտ իրենց կուսակցութիւնը: Ամենահինը հայ յեղափոխական կազմակերպութիւններէն՝ այսօր հոգեվարքի դուռը հասած է այլեւս: Խրկրին մէջ գործունէութեան փոխարէն՝ գերեզմանային անշարժութիւն մը. չկայ ո՛չ մէկ գրական շարժում. պէնքի ու դրամի ո՛չ մէկ ներմուծում: Փրօփականտ՝ մեռած է շատ վայրերու մէջ, կամ գունատ ու ապարդիւն: Արտասահմանի մէջ տարբեր անուններով հաւաքուած դրամները կը վառնուին «Երիտասարդ Հայաստան»-ի ու Փարիզի կեդրոնի պահպանումին համար:

«Ինպատ քաղաքական բանտարկեալներու» հան-
գանակած աննշան գումարներ եւս անկարող ե-
ղած է կուսակցութիւնը ապահովաբար աւել հաս-
ցընել, արդէն սահմանափակ քանակութեամբ
գոյութիւն ունեցող իր մասնաճիւղերու անհե-
տացումին հետեանքով. նեղն ինկած՝ այդ պիտի
պարագաներու մէջ՝ կը ստիպուի հակառակորդ
կազմակերպութեան մը աջակցութիւնը փնտռել։
Ամերիկայի մէջ «անպարտաճանաչ» մասնաճիւ-
ղեր կը լուծուին կեդրոնի կողմէն — հասկնալի
է, իրենց ինքնագիտակցութեան զարթնումին,
և յաւիտենապէս ու անօգուտ կերպով
կիթուող կովի իրենց պաշտօնին դէմ ըմբոստա-
նալնուն համար։ Ամերիկայի մասնաճիւղերու
կողմէն՝ կուսակցական գործունէութեան փնտա-
կար ուղղութեան դէմ լուսող ամէն տրտունջ կը
խեղդուի բռնապետական, բռունցքի մը հարուս-
տով, սեէ դիտողութիւն չընել համարձակող մաս-
նաճիւղ անփիջապէս կը լուծուի «Երիտասարդ
Հայաստան»ի ջոջ-աղաներու մատի մը շարժու-
մովը։ Նոյն թերթի «փողոցային ուղղութեան»
մասին եղած բողոքները կ'անտեսուին։ Դաշ-
նակցութեան դէմ մղուած թունալից փրօփա-
կանտին իրը շարժառիթ՝ կը մասնանշուի Դ. -բդ
Պատգամաւորական ժողովի մերժումը համե-
րաշխութեան մասին։ Մինչդեռ բացարձակապէս
տգէտ պէտք է ըլլայ ատոր հուսատալու, քանի որ
ատկէ առաջ ալ, տարիներու ընթացքին մէջ՝ «Ե-
րիտասարդ Հայաստան»ի միակ գործն եղած է՝
ամէն նախադասութեան, ամէն մէկ բառի մի-

ջոցով կաթիլ առ կաթիլ թոյն լեցնել իր հետեւ-
ւորդներու սրտին մէջ, անոնց ատելութիւնը ա-
ւելի զօրաւոր բնելով դէպի 'Իաշնակցութիւնը'
քան դէպի սուլթան Համիտը :

Իրամ շկայ : Կեդրոնը դրամ կ'ուզէ . կը պա-
հանջէ, կը սպառնայ : Կեդրոնը մտադիր է դաժ է
Ամերիկայի Գործադիր Յանձնարումըը լուծելու,
իրը անհնազանդ մարմին մը, և ձգած է այդ
նպատակը, եւ անկէ ալ դրամ կ'ուզէ :

Այս ամէնը կը բացատրեն այն անկումը, ո-
րուն մէջ այսօր գահավէժ կը թաւալի այդ կապ
մտկերպութիւնը : Անկումը՝ անկասկած՝ ամենէն
չուտ իր իսկ զեկավարներու կողմէն նկատուե-
ցաւ, երբ մանաւանդ՝ անցեալ 1907 թուականին
կովկասի ամենակարեւոր ուժերու շարք մը լքեց
դայն, անցնելով նորածիլ Սոցեալ-Տեմօքրատանե-
րու բանակը, կամ իսպառ չէ զոքանալով :

Հասարակութիւնը կարանցուցած է այլեւս իր
նախկին վտասուցութիւնը այդ կուսակցութեան
վրայ : Եարքերը կը յօսրանան, և աւելի ու աւել-
լի ուժասպառ կ'ըլլան . նոր անդամի մը յաւե-
լումը կուսակցութեան «վաշտերուն»՝ սրտաշարժ
ու դրդադին յօդուածներու շարքով մը կ'ա-
ւետուի «Ե. Հ.»-ի էջերուն մէջ : Միամիտներու
աչքին թող փշելու նպատակով՝ անպատկառ սու-
տերով լեցուն ու զուտ-պարսկական շափազան-
ցութիւններով առասպելներ կը քշուին իսուժա-
նամիտ կարծեցեալ հասարակութեան մէջ «Ե. Հ.»-ի
միջոցով՝ «Հնչակեան բանակներու» ստալոդ քա-
ջագործութիւններու «պատմական» ձափռուք-

ներով, կովկասի հայութեան փրկութիւնը միայն ու միայն Հնչակեան հերոսներուն, քաջերուն, դիւցազներուն վերագրելով — թաթարական մահասարսուռ կռիւներու ատեն: «Ե. Ղ. »ը կատարեալ «Ջհուտի պազար»ի մը վերածուած է, ուր վարդի անունով հոտած սխտորը կը ծախուի, և տատրակի արժէքով՝ ձուկի նեխած գլուխ մը: Ասկայն մահացումի ընթացքը այդ միջոցով բը նաւ կարելի չեղաւ կասեցնել:

Այդ մահացումը պատահականութեան ու անակնկալներու արդիւնք կարելի չէ նկատել: Դան դադ ու յարաճուն՝ հետեւանք մըն էր պատճառներու երկար շարքի մը, սկզբունքային ու ծրագրային խառնաշփոթութեան մը՝ սրուն ենթարկուելով՝ աստիճանաբար սկսաւ կազմալուծուիլ 1896 թուէն սկսած: Ծանրանալ այդ պատճառներու տարրալուծումին վրայ — չի ներեր ներկայ գրքոյկին ծաւալը: Իրողութիւնը սակայն հրապարակի վրայ է — կուսակցութեան ողորայի վիճակը: Անոր կովկասեան հատուածներու ցրատումէն ետք՝ որ հետզհետէ սուր բնաւորութիւն մը կ'առնէ, մասնաւորապէս անցեալ տարիէն, երբ բազմաթիւ մասնաճիւղեր ամբողջական կազմով կամ խմբային հատուածքներով սկսեցին ռուս սօցիալ-տէմօքրատ կուսակցութեան մէջ ձուլուիլ՝ կամ այլ գոյներ ընդունիլ՝ Հնչակեանութեան օրհասը յուսահատական բնոյթ մը ստացաւ:

Անհրաժեշտ էր ռազմագիտական յաջող դարձուածք մը՝ փրկելու մայր կուսակցութիւնը

վերջնական տապալում էն . և ահա առաջիկա՝ հրապարակ նետուած «Համերաշխութիւն»ը՝ իբր անդրդուելի պահանջ վերակենդանացումի հիւանդոս ցանքերուն : Ասով պէտք է բացատրել անցեալ տարւընէ սկսած համերաշխութիւն հաստատելու իր յամառ փորձերը, սղաչանք-պաղատանքը իրեն խորապէս ատելի, ու ծրագրային եւ թաքթիքի ոչ մէկ ներդաշնակութիւն ունեցող կազմակերպութիւններուն :

Ան կը զգար համերաշխութեան պահանջը իր գոյութիւնը վտանգէն ազատելու . պէտք էր համերաշխիլ, ինչ գնով ալ ձեռք ձգուէր այդ համերաշխութիւնը և որո՛ւ հետ ալ ըլլար ան — միայն թէ համերաշխիլ : Աստուծոյ հետ, սատանայի մը հետ — միայն թէ համերաշխիլ : Համերաշխութիւնը անգուգական պատրուակ մըն էր վըհատուող կուսակցականները խանդավառելու, շէզոքներու և բոլոր պահպանողական տարրերու յաւիտենական կաղկանձներ լռեցնելու, ու թերևս՝ զանոնք ալ սիրաշահելու . անկա միակ ու միակ փրկաւէս միջոցն էր դրամ գտնելու, որմէ կախուած է կազմակերպութեան կեանքը : Համերաշխիլ պէտք էր, ի սէր կուսակցական շահերուն, ի սէր դեկավար-գործիչներու ապրուստի ապահովութեան, ի սէր նոյնիսկ «սօցիալ-աէմօկրատ ապագայ հայ-ազգայնական հասարակապետութեան», ի սէր թիւրքիոյ բոլոր «սօցիալ-աէմօկրատ ցեղերու» բարօրութեան և կամ բացարձակապէս «զուտ հայկական անկախութեան» — ըստ վերակազմեալ դեղատոմսի — տարբերու-

Թիւն շըներ, համերաշխիւ պէտք էր :

Եւ երբ "Երիտասարդ Հայաստան"-ի բերնով անհատնում թուքի, հայհոյանքի ու անուանարկումի ենթարկուած Դաշնակցութիւնը ինքնասիրութիւն կամ հեռատեսութիւն ունեցաւ անմաքուր ձեռքը թոթուելէ հրաժարելու՝ Հնչակեանութիւնը, որ պէտք ունէր անպատճառ համերաշխելու բանի մը հետ, ինչ որ ալ ըլլար այդ բանը՝ վերջապէս երկար պարտուղումներէ ետք՝ չի տակ» ճամբուն վրայ կանգնեցաւ : Բառը իրականութիւն եղաւ :

Երկու քն ալ իրար գտան :

Անցեալ 1906 թուականը հոգեվարքի ու դանդաղ մահացումի նոր շրջան մը բացաւ վերակազմեալ Հնչակեանութեան և Հին-Հնչակեանութեան համար : Այսօր՝ կանգնած ենք անոնց վերակենդանացումի արուեստական ճիգերուն հանդէպ — երևոյթի մը՝ որ նախորդներուն նման՝ սլրերգական վիժումի մը պիտի յանգի :

Թերեւս պատմական անհրաժեշտութենէ մը գոյութեան կ'ոնչուած՝ անփայլ ու անծիր ասուպներու նման իրենց անհեթեթ պտոյտը գործելու հայ երկնակամարին վրայ՝ իրրեւ ճակատագրական անխուսափելի երեւոյթ՝ անոնք հաւատարմարար կատարելին իրենց դերը՝ մեր ազգային վերածնութեան անցնող ժամանակամիջոցին մէջ :

Եւ օրհասը՝ որուն տկանատես կ'ըլլանք այժմ՝ կրնայ կարճատեւ միջոցի մը համար տակաւին երկարիւ սակայն ոչ երբէք այդ երկու կազմա-

կերպութիւններու յարութեամբը վերջանալ :

Քաղաքակրթութեան նախնական շրջաններէն անցնող իւրաքանչիւր մարդ կաւին համախմբում՝ ամէն երկիրներու մէջ և ամէն ժամանակ՝ կ'ենթարկուի աւելի կամ նուազ շափով՝ հաւաքական գոյութեան հզօր ցնցումներու : Պայքարը հինի և նորի միջև . — առաջինին ընդդիմադիր գալարումները դիրքի տիրապետութեան համար, և երկրորդին գրոհը՝ զայն յափշտակելու՝ միշտ ալ ծնունդ կուտան խառնաշփոթ դրութեան մը, որուն յաճախ տեւական բէաքսիօն (հակազդեցութիւն) մը կը յաջորդէ : Եւ եթէ վերանորոգիչ հոսանքներու թաւալիչ ոյժը՝ բարոյական հիմնապինդ հողի մը մէջ չէ նետած իր արմատները, այլ քայած է անոր մակերեսովէն վեր, տեսակ մը օդին մէջ առկախ՝ զուրկ անուտուեր իտէպներու մտապատկերներէ՝ չայդպիսին դիւրաւ կը կասեցնէ իր յառաջընթաց վազքը, կը շեղի բնական արահետէն, առանց նոյնիսկ արտաքին պատուարի մը հետ ընդհարում ունենալու : Հետեւանքը կ'ըլլայ բացառական — փոխանակ շինելու՝ կը քանդէ, փոխանակ թարմ շունչ սփռելու իր անցած վայրերուն մէջ, կը թունաւորէ, նետում ու սպականութիւն տարածելով . վերանորոգումի տեղ՝ այլասերում առաջ բերելով :

Ճրանտական յեղափոխութեան առաջին պայթիւնները ամենամեծ երեքումներու սկզբնափուլը յայտնուեցան նոր կեանքը թեակոխելու ճիգեր ընող այդ մեծ ազգին համար :

Տարբեր ըբմունքներու, աշխարհայեցողու .

թեան և գգացումներու այնպիսի՝ խելագար ընդ-
հարում մը տեղի ունեցաւ, որուն նմանը տեսած
չէր այդ ժողովուրդը իր հազարամեայ գոյու-
թեան շրջանին մէջ: Ժամանակ մը եղաւ, երբ
բիրտ խուժանը տիրապետեց կեանքին վրայ: յե-
ղափոխութեան անունով հարիւր հազարաւոր
անմեղ մարդիկ, կիներ ու նոյնիսկ մանուկներ
խողխողուեցան, Փարիզի, Լիօնի, Նանսիի և ու-
րիշ վայրերու փողոցները ամենազագրելի սպաւ-
դանոցներու վերածուեցան և ոճիրը թագաւորեց
ամենաբարբարոս ձևերու տակ՝ «Ազատութեան,
Հաւասարութեան, Եղբայրութեան» անունով:
Առանց Բիզարրոյի մը՝ Բերուի այդ հրէշ-բռնա-
պետին՝ Հարաւամերիկեան Հասարակապետական
«ազատ» երկրներուն մէջ միլիօնաւոր մարդիկ
զոհուած են անցեալ դարու ընթացքին մէջ,
գաղափարի անունով գործուած ոճիրներու զոհ
երթալով: Պիզմարքեան Միացեալ Գերմանիան՝
ազգային միութեան ու փառքին սպասարկու-
կատարեալ պատուհաս եղաւ ամբողջ աշխարհին,
իբրև պատերազմի սպառազէն Մարս աստուած
մը, և նո՛յնքան ալ պատուհաս իր իսկ գերման
աշխատաւոր դասակարգին համար:

Սակայն քաղաքակրթական շարժումներու բը-
նական օրէնքը միշտ առաջ կը մղէ իրեն անձնա-
տուր եղած տարրերը, մեծամեծ զարտույունե-
րով ու միջնադարներով, բայց և յարաճուն
թափով մը: Սխալ ու կորստաբեր ճամբաները
կը Լքուին, լաւագոյններու գտնուելուն շնորհիւ,
սայթաքող քայլերը կը զգառնան աւելի հաստա-

տուն: Հանրային կեանքի յեղաշրջման դրօշակակիրներէն անոնք՝ որ կոյր պատահականութեան մը պատճառով — պարզապէս փողոցէն՝ գործիչ-դերակատարներու պաշտօնի բարձրութեան ցափկած են, առանց իրենց կոչումը և իրական դիրքը ըմբռնելու՝ կը տապալին, կը չքանան հասարակական գործունէութեան թատերաբեմէն՝ նոր և արժանաւորագոյն յաջորդներով փոխարինուելով: Այդ կարգի անհատներու մէջ՝ երբ ձեւակերպուած, վսեմութեան ու ազնուացումի ձրգողականութեան և անարատ իտէալներու փոխարէն՝ գաղափարական գործունէութեան անուան տակ՝ մղիչ ոյժը կը հանդիսանայ սովորական խաչագողի մը հացի խնդիրը, ծիածանի բոլոր գոյներով ներկուած՝ անոր այդ մղիչ զօրութեան կենսունակութիւնը անխուսափելիօրէն վաղանցուկ կը դառնայ: Շարժում մը՝ որ գաղափարական դրդապատճառներէ զատ՝ իր մէջ կը պարփակէ նաեւ օտար, բացասական ջիղեր՝ կանխաւ բարոյական անանկացումի դատապարտուած պէտք է սեպել. ան կը մեռնի՝ երբ իր կայուն սիւները - անոր միջոցով ապրիլ ուզող անհատներ՝ դուրս կը նետուին հրապարակէն:

* *

Վերակազմեալութիւնը Հին Հնչակեանութեան ցնցոտիներէն և այլևայլ նորելուկ աւելցուկներէ կարկտուած՝ իրմով կը պատկերացնէր տարբեր դասակարգերու, տարբեր շահերու ծառայող անհատներէ բազկացած խայտաճամուկ

Համախմբում մը՝ — գրեթէ առանց բացառու-
թեան՝ ներքնապէս իրարու չհամապատասխանող
հոգեբանական տրամադրութիւններով : Ան կը
նմանէր արեւելքի մէջ՝ իբր արքայութեան հե-
տեւանք՝ շատ գործածական վերմակի երեսի մը ,
անհամար գոյներ ու նկարներ ձեւացնող կտոր-
ներէ կարուած , զաւելտական դասաւորութեամբ՝
փտած թելով մը իրարու կցուած :

Վերակազմեալութիւնը ներկայացնող տար-
րերը երբէք գաղափարի համանմանութեամբ ,
սկզբունքի ու թաքթիքի անկեղծօրէն որդեգրուած
մտքնուններով չեն եկած իրարու միաւորուած :
1896-ի անջատումը մասամբ հետեւանք էր մեծ
կտորածներու առաջ բերած լքման ու յուսահա-
տութեան , և գլխաւորապէս՝ Եւրօպա սպաստա-
նած կարգ մը գրագէտներու ապրելու անդիմա-
դրելի պահանջին , որոնց համար յեղափոխական
յիկավարներու դերը՝ եկամուտի տեական աղ-
բիւր մը կը նկատուէր : Նազարպէկեան տիքթա-
թօրութեան դէմ սկսուած արշաւանքը՝ դրամա-
կան վատնումի , արիւնայեղ պոյցեր կազմակեր-
պելու մասին Եւրօպայէն արձակած հեռագրական
հրամաններու սխաթմին դէմ , կամ սօցիալիստա-
կան գործունէութեան որդեգրումը — սստնք ա-
մենքը լոկ պատրուակ ու միջոց եղան վերակազ-
մեալութեան առաջին ռազմիրաններու ձեռքը՝
դիրքերը յափշտակելու և տխմար ամբոխը իրենց
հոտէն քաշելու համար :

Հայի խնդիրն էր ամենակարեւորը :

«Ռազմիկ»ը՝ որ ամենէն շատ զբաղեցաւ վե-

րակազմեան թեան անդամահատումի խնդրով՝ իբր զննող աչք մը անոր ամեն մութ խորշերը թափանցելու արամադրութեամբ, ինչպէս նաև կարգ մը նուազ լրջօրէն նայն հարցով հետաքրքրուող հրատարակութիւններ՝ չափազանց միակողմանի գտնուեցան իրենց տեսութիւններուն մէջ։ Թաքթիքի, սկզբունքային խնդիրներու հիւանդոտութիւնները, հակամարտութիւնը, գաղափարականի անկատարութիւնը կամ բարոյական շողախի անզօրութիւնը չէին՝ որ վերակազմեալութիւնը արագօրէն ներուամի ու քայքայումի առաջնորդեցին։ Անոր սղբերգական անցեալին մէջ կատարուած դէպքերը լուսաբանելու համար այդպիսի պարագաներ միայն ինկատի ունենալ՝ կը նշանակէ ուսումնասիրութիւնը թէ՛ անկատար ընել, և թէ՛ միևնոյն ատեն չափազանց պատուած ըլլալ վերակազմեալ տիրահոշակ պարագլուխները։ Լօմպրօզոյի կարկինով գանկերու խորդուբորտութիւնները շափել, հասկնալու համար թէ՛ այսինչ անհատը արամադիր է ոճիր գործելու, միևսը՝ գողութեան անզուսպ հակում մը ունի, երրորդը՝ արբեցողի մը հինգերորդ սերունդը կը ներկայացնէ, կամ մէկ ուրիշն ալ՝ ժառանգական անառակութեան ենթակայ է — այդպիսի հետախուզութիւն մը խնդրին մէկ մասը միայն կրնայ պարզաբանել։ Պէտք է դիտողութենէն չվրիպեցնել նաև միջավայրը, արտաքին պայմաններու նպաստաւորութեան աստիճանը։

Ղեկավարներու հոգեկան առանձնայատկու-

Թիւնները, ըմբռնումներու այլազանութիւնը և ներքին մղիչ պայմանները — քառասային խառնուրդի մը երևոյթով՝ վերակազմեալութիւնը կանխաւ մահացումի դատապարտած էին, այդ բոլոր տիպերուն միջև բարոյական շաղախի մը բացակայութեան պատճառով: Հոն իրարու քով եկած էին անկեղծ ու պարզամիտ, ամէն հովերէ տարուող երիտասարդներու հետ՝ նաև սովորական բախտախնդիրներն ու խաչագողը, կրթուած՝ անգիտակցօրէն պուրժուա հակումներու ենթակայ անհատին հետ նաև ամենատափակ տիրացումը, հացկատակ մտաւորականին հետ նաև պարզ, հաւատացող կուսակցական մը: Այդպիսի աղիւսներէ կառուցուած շէնք մը, թուքով իրարու փակցուած, ի հարկէ, առաջին իսկ հովէն պիտի քայքայուէր ու փլէր: Առաջապահ շարքերը, որոնք պօլսահայ մտաւորականութեան տակաւնները կը ներկայացնէին — հազուադէպ բացառութեամբ — չէին կրնար կուսակցութեան զօրավիգը հանդիսանալ:

Չեւնածու ղեկավարներէն դուրս՝ մնացած զանգուածը — բուն կուսակցութիւնը ներկայացնող բանակը՝ արդէն ինքնին այն միջավայրը եղաւ, որուն մէջ կրցաւ արմատ նետել յեղափոխական շարիքը: Իր թանձրացեալ խաւարամտութեամբ, իր խղճալի տգիտութեամբ՝ այդ բանակը չկրցաւ երբէք բարձրանալ կոյր խուժանի դերէն, նպաստաւոր պայմաններով հնարաւորութիւն ընծայող բոլոր մութ տարրերուն իր կուրծքին տակ սողոսկելու և բոյն դնելու. այդ կոյր խուժանն

էր, որ իր սիրտն ու վէրքերը կրճոտող աղէտին սնունդ տուաւ, անոր տեղականութիւնը ապահովեց, անասնական անգիտակցութեամբ մը պատրաստ՝ իր պետերու մատի մը շարժումով կրակի ու ջուրի մէջ ինքզինքը նետելու: Ան եղաւ, եթէ Զօլայի պարբերութիւն մը գործածենք — այն աղբը, որ սրդեր կը ծնի, և որոնք կ'ապրին այդ աղբը ուտելով:

Եւ այդ իսպառաքէտ հաւաքածուն՝ առանց ամենեւին հայութեան իրական կացութեանը տեղեակ ըլլալու, անոր քաղաքական-սնտեսական դիրքին, թուական շափին, շրջապատող պայմաններու յուսահատօրէն աննպաստաւորութեան եթերային յեղափոխութեան մը համար, վերջապէս հայ ժողովուրդի Ֆիզիքական ու հոգեկան անկարողութեան՝ բաց դաշտին մէջ համահաւասար պայքար մը սկսելու հսկայ պետութեան մը դէմ — ան՝ այնուամենայնիւ՝ մեր իրականութեան մէջ նետուեցաւ խղճալի ասպետականութեամբ մը, հնարաւոր համարելով օրօրել իր միտքը անկախ Հայաստանի մը օդերևոյթով:

Վերականգմանութեան ծրագրային տարտամութեան տարրալուծումը յետաձգելով ուրիշ աշխատութեան մը՝ գոհանանք այժմ անոր 12-ամեայ գոյութեան բնորոշ գիծերուն վրայ նետուած թռուցիկ ակնարկով մը:

* * *

Հասարակութիւնը, մանաւանդ ամերիկահայը, բաւականաչափ առիթներ ունեցաւ մօտէն

դէտելու վերակազմեալութեան գոնէ արտաքին կեդեը, որուն օգնեցին անոր մօտաւորութիւնը — բուն իսկ իր ծոցին մէջ ունենալու հանգամանքը, և այն աղմկայոյզ դէպքերը, որոնք ժամանակ առ ժամանակ իրենց վրայ կեդրոնացուցին հայ և օտար ազգութիւններու ուշադրութիւնը:

Այդ դէպքերը՝ որոնք միմիայն դաւերու, դրամաշորդութեան, զեղծումի, սպանութիւններու և այլ սճիրներու դժոխային ցանցով մը պարփակեցին ամբողջ կազմակերպութիւնը՝ գիտակից մտքերու առջև բացայայտ ըրին այն իրողութիւնը, որ վերակազմեալութեան սահմանուեցաւ ամենաաւանդակ հնոց մը ըլլալ, ուր կը դարձնուէին մարդկային արժանապատուութիւնը խորապէս վիրաւորող հոգեբանական վատթարագոյն տրամադրութիւններ: Ասոնք ամենուն ծանօթ ու յայտնի ճշմարտութիւններ են, որոնք անըմբռնելի են խեղճ կուսակցականներու համար, քանի որ ահագին զոհաբերութիւններէ վերջ՝ բացօթէն տեսնելով իրենց խարուած ըլլալը՝ բոլորովին յիմարի տեղ իրենք գիրենք շղենելու իրապէս յիմար ինքնասիրութենէ մը՝ դարձեալ գերբնական ճիգեր կ'ընեն իրենց ջիղերը լարելով՝ կատարուած «մաքրագործումէն» ետք կրկին սաքի կանգնեցնելու մեռած դիակը, վաղեմի յոյսերու կայծի մը բեկրեկ փայլին հանդէպ՝ բրած զրկանքներու միանգամայն տպարդիւն հանգամանքը ուրանալու միտումով:

Կուսակցութեան ամբողջ արիւնոտ ու սև անցեալի պատկերին վրայ շկայ անկիւն մը՝ որ

արատաւորուած շըլլայ ամենալաիրշ վանտալա-
կանութեամբ իր իսկ պարագլուխներու Օւոքով,
չկայ երևոյթ մը, դէպք մը, ամենաչնչին փաստ
մը, որուն առջև հնարաւոր ըլլար պահ մը կանգ
առնել, սփոփուիլ ու մխիթարուիլ, և մրմնջալ
թէ՛ առաքինութեան նկատելի այս հիւլէէն ըս-
տացած ներշնչումը կրնար ապագայ լաւագոյն
ակնկալութիւններու իրաւունքը համարուիլ :
Սակայն համատարած ապականութեան ինչո՞ղ
մթնոլորտին մէջ բացարձակապէս անմտութիւն
է բարեփոխութիւն յուսալ, մանաւանդ որ ներ-
քին ամբողջական պատրաստականութեան բա-
ցակայութեանէն դատ, վերածնութեան ջահակիր-
ներու պաշտօնին գլուխն անցած են կուսակցու-
թիւնը նեխումի, դիակնացումի առաջնորդող
ուարրեր : և ատկէ զատ՝ թարմ, դուրսէն եկող
ոյժերու և ո՛չ մէկ յաւելում ունենալով :

Վերակազմեալութիւնը իբրև գործօն մար-
մին՝ կազապարուած է շարք մը զինքը բնորոշող
երևոյթներու մէջ : Անոնք են՝

1. — Փոխադարձ անհամաձայնութիւն ու ա-
տելութիւն իր ղեկավարներու միջև :

2. — Ատելութիւն ու հալածանք բոլոր ոչ-վե-
րակազմեալ համախմբումներու և անհատներու
դէմ :

3. — Հակառուսահայ արշաւանք :

4. — Սպաննութիւն, դրամաշորդութիւն և
զեղծում :

5. — Մամուլի ու գրականութեան անբարո-
յացում :

1.— 1896-ի անջատումէն առդին, այսինքն՝ վերակազմեալութեան ծնունդէն մինչև այսօր՝ այդ կազմակերպութիւնը կատարեալ գաղանանոց մը եղած է, ուր ամէն մէկը կը ջանար դիմացինը տապալել, յօշոտել ու լափել — իրապէս վայրենի կատաղութեամբ մը: Ասոր փաստ՝ Արփիարի, Չօպանեանի, Պարթևի, Արզուեան-Մարդուկէսեանի, Սըվազլիի, Սուրէնեանի, Տէր-Մարկոսեանի և բոլոր միւսներու դիրքը իրարու հանդէպ, ուր գաղափարական ընկերակցութեան և ո՛չ մէկ նշոյլ, և ո՛չ մէկ ջիղ կարելի է յայտնագործել, ուր պարզ մարդու մը, նոյնիսկ ոչ-մըտաւորականին անվայել, գձուձ ու աղտոտ վերաբերմունք մը միայն կարելի է դիտել:

2.— վերակազմեալութիւնը հաւատաքննական անհամբերատարութեամբ անողոք ու բիրտ հալածանքի ենթարկած է հայկեանքի ամբողջութիւնը ներկայացնող այն ամէն երեւոյթներ՝ որ իր կուսակցական շահերուն վնասակար և կամ անտարբեր դիտած է, ազբի մէջ տրորելով անոնց ամենէն նուիրական զգացումները, ամեն սրբութիւն ու պատիւ: Փաստ՝ «գործնական» յեղափոխութիւնը արտասահմանի մէջ՝ հայութիւնը դէպի այլասերում գահավիժող այն խայտառակ դէպքերը, որոնք թունաւորեցին հասարակութեան միտքը, և պժգալի ըրին շատերու համար նոյնիսկ «յեղափոխութիւն» անունը: Փաստ դարձեալ, իր պարբերական մամուլը, ամբողջ էութեամբ, խժբժանքներով, հայհոյանքով ու լպիրշ բանակռիւով այս կամ այն անհատի, չէզո-

քի, կղերի, հոգաբարձութեան, բարեգործականի, թերթի, մէկու կնոջ, միւսի քրոջ մասին :

3.— Հակառուսահայ արշաւանքը վերակազմեալ պետերու «քաղաքական թափթիքի» ծնունդ մըն էր, կուսակցութեան զօրացումի տեսակէտէն անհրաժեշտ պայման ճանչցուած : Ռուսահայի վարկաբեկումը, իրրև թիւրքահայ դատինկատմամբ վնասակար սարրի մը ըստ վերակազմեալ տրամաբանութեան — անխուսափելի պահանջ էր, որովհետև անիկա կը նկատուէր իրրև Դաշնակցութեան անկում, — ամենավառ բաղձանքի մը իրականացումը — որուն վրայ պիտի հիմնուէր վերակազմեալութեան փառքնու ամենակարողութիւնը, իրրև գերիշխող կազմակերպութեան՝ ընդհանուր թիւրքահայ ազատամարտը ղեկավարելու մէջ : Հակառուսահայ արշաւանքը տիրող ոգին եղաւ կուսակցութեան մէջ, իսկ անոր ամենադաժան ներշնչողներէն — Գարթեը, որ չի ամչնար տակաւին մինչև այսօր ռուսահայերու դէմ մղած իր անազնիւ պայքարը շարունակել, օգտուելով ամէն առիթէ : Ու այս կ'ընէ միայն իր ապուշ հետեւորդներու կիրքերը գրգռելու համար, ատելութիւնն ու զազանային բնազդները արիւնակից եղբայրներուն դէմ, և միեւնոյն ատեն անոնցմէ դրամական ու բարոյական աջակցութիւն պահանջելով, վերակազմեալ շէֆերու քէյֆին ու սիրուհիներու օգտին վերջը ծառայեցնելու նպատակով : Փաստ՝ բեմերէն, լրագրութեան ու գործնականին մէջ մրդուած անընդհատ պայքարը ռուսահայ դրօշմը

կրող ամէն երեւոյթի դէմ, ուստի այ գրողներու — Արծրունիի, Րաֆֆիի, (թէ և պարսկահայ, բայց Պարթեւի աչքին՝ ուստի) Նազարեանի, Խաչատուրեանի նկատմամբ ցոյց տուած արհամարհանքը, հեղեանքները, անվայել ծաղրը: Փաստ դարձեալ՝ հայ-թաթարական կռիւներու ատեն իր բռնած դիրքը, երբ լրբութիւնն ունեցաւ: Պաքուի առաջին ջարդերը աւետելու ամբարկոյտ վերակազմեալութեան՝ անարժան, ստոր բռնութիւնը դէպի կոտորուած եղբայրները (և որոնց եղբայր ըլլալ արդէն չի կրնար կոչուիլ): Այնուհետեւ արձակ կամ դաղտնի՝ կովկասանպաստ հանդանակութիւններու խանգարումը վերակազմեալներու կողմէ — Պարթեւի ու ընկ. դըրդմամբ, մինչև որ հասարակութեան ու նոյնիսկ պարկեշտ վերակազմեալներու գայրոյթին արժանի ըլլալու վախէն ստիպուած՝ իր դիրքը փոխեց, սկսեց լալ, քծնիլ, աղաղակել համազգային եղբայրակցութեան անհրաժեշտութիւնը, ներքուստ՝ դարձեալ հանդանակութիւնները խանգարելով — ճիշդ չին շնչակեան, վարագդատի ու իր արբանեակներու նման: Փաստ դարձեալ՝ Պարթեւի վերսկսած հակաուստիայ արշաւանքը բեմերէն ու «Լեզգ»ի էջերուն մէջ, որուն համար, անշուշտ, հաշիւ պիտի պահանջուի իրմէն:

Գ.— Սպանութիւն, դրամաշորդութիւն, գեղծում: Ասոնց գոյութիւնը վերակազմեալութեան է՛ն բնորոշ գիծերէն ըլլալով՝ բնաւ պէտք չունի ոտնէ ապացոյցի: Հայութիւնը չափէն աւելի անմեղ զոհեր տուաւ այդ ոճիրներուն: Տերօր-

ները, մահափորձերը, ծեծը, կռիւը, ժողովներու խանգարումը — ամերիկահայ տարեգրութիւններու սովորական երեւոյթներն են :

Ճ.— Գրականութեան ու մամուլի անբարոյացում: Փաստ՝ ամբողջ վերակազմեալ, մասնաւորապէս ամերիկահայ օրկանները, ուր գրիչը, թուղթը պարզ զէնքերու տեղ միայն կը ծառայեն, կռուելու հակառակորդի կամ կարծեցեալ հակառակորդի մը դէմ այն բառերով, այն նախադասութիւններով, որոնք փողոցային կռուածէն ալ անհունապէս սուտը են ու անպատեհութեան դարձնին վաստակողներէն մէկը եղաւ :

Այս հինգ գլխաւոր հոսանքները հարազատութենէն որդեգրուեցան ու գործադրուեցան վերակազմեալ պետերու կողմէն, ամէն անհամակերպող ու փոքր իշատէ գիտակից տարրերը վտարելով կազմակերպութենէն՝ թոյնի, դաշոյ՛ի, ասորճանակի, մատնութեան ու այլ միջոցներով՝ ամէն անգամ՝ իեղդելով ըմբոսս, բողոքող ձայներ: Վերակազմեալ մտաւորականութիւնը այդ բոլոր ոճիրներուն հանդէպ վարձկան ու անամօթ գործիքի մը դերը կատարեց, հրէշային պաղատիւնութեամբ սրբացնելով զեկավար պետերու ամէն գազանութիւն, ամէն զեղծում, անկում ու անբարոյականութիւն: «Մեծ գրագէտը» այդ վարձկան մտաւորականութեան ամենէն տիպիք անձը եղաւ :

Բացի կուսակցութենէն՝ այլևայլ սլարագաներու մէջ չեզոքացած պարագլուխներէ՝ անցեալ

տարուայ Արզուեան— Մարդուկէսեան— Պարթև վերակազմեալ եռապիտուկեան սիքթաթօրնէ-րէն Մարդուկէսը՝ իբրև թավշանճեանի դահլիճ-ներէն մէկը՝ Նիւ-Յօրքի բանտին մէջ կալանաւոր իր դատավճիռին կը նայի, իսկ Արզուեանը նոյն սպանութեան իրոյն մեղսակից նելշնչող մը ամբաստանուած քրէական ոճրագործ՝ փախստական — երկուքն ալ ժամանակ պիտի ունենան հասարակութիւնը նորէն իրենցմով գրադեցնելու :

Անհրաժեշտ է սակայն այնպիսիական-մտաւորական Պարթևը հասարակական բարոյագիտութեան դատաստանին առջև բերել, քանի որ ամերիկեան արդարագատութիւնը շկրցաւ անյանցապարտի մը նստարանին վրայ բազմեցնել :

Պարթևը՝ Արփիարական հրապարակօսական դպրոցի հաստատորիմ սաներէն մէկը՝ իր այնպիսի փոխական խաչագողական գործունէութեան նախորդ տարիներու մէջ, պօլսահայ առաջին օրագրուի ձեռքով անուղղակիօրէն անբարոյականացած ու ապականուած երիտասարդ մտաւորականութեան շարքերէն՝ կրցաւ իր վարպետին ստեղծած անմաքուր միջավայրը այնպիսի զարշահոտութեամբ մը լեցնել, որուն առջև ինքը ոճիրը պիտի խուսափէր : Եւ վերակազմեալութիւնը՝ իր մէջքին վրայ տանող, իբր դիցարանական Ասյաս մը, Պարթևը՝ իր կուսակցութեան կենդանի ոգին՝ «կայէնածին Արզուեան կոչուած ճաւղի միջագային հմայքը բարձր պահելու» ճգնելու միայն ընդունակ գտնուեցաւ, իր իսկ անամօթ խոստովանութեամբ :

«Արգուեան Մարդուկէսեան քլիֆին» ստեղծած ճահճային գարշահոտութեան թանձրացումին մէջ՝ կուսակցութեան վերջին պառակտումին հանդէպ Պարթևի դիրքը, հայհոյանք-լուսանքները «կայէններու» հասցէին՝ շարք մը միամիտներու համար, անկեղծ խոստովանանքներ էին, քաւութեան ու մկրտութեան տրամադիր յեղափոխական Տօն-Քիչօթի կողմէն, որոնք գաղափարական ապագայ գործունէութեան վկայագիրը կուտային այդ մեծ ինքնակատակին: Այդպէս չէ սակայն:

Պարթևը, իբրև գողերու և աւազակներու անարգ, վանձկան գործիք մը, իր գրական ու հրոստորական զառանցակոյտերով սօքէս, ոյորմելի ապուշներէ բազկացած խուժանի մը ծափահարութիւնները որոշուեալ ետեւէն ինկած, զանոնք հիացնելու իր համայնագէտի մը վայել պաշարով, մանկապարտէզներու դասագրքերէն իր յուշատետրին մէկ ծածուկ անկիւնին մէջ ընդօրինակած Ռօպէսփիէններու, Մառաթներու, Տանթօններու անուններով անոնց սօքիտութիւնը շրջապատող, սակայն հիմնուած սրապէս համբակ հայ պատմութեան ու աշխարհագրութեան իսկ, Հայաստանը Արարիային սահմանակից ընելու շափ և պատմական ամենէն ծիծաղաշարժ անհեթեթութիւններով զարդարելու իր թերթը – այդ Պարթևը, ամբողջ կազմակերպութեան մը շահերը քանի մը յելուզակներու ծառայեցնելու տրամադիր, ընդհանուր ամերիկահայ գաղթականութեան թունաւոր ժահրը, ո՛չ միայն այդ կազմա-

կերպութիւնը անկումի առաջնորդեց, այլն ամէն հայի, ամէն համախումբումի մէջ ատելութիւն, դաւ ու ոճիր սերմանելով -- բացարձակապէս անպատուարեր գործօն սխր հանդիսացաւ հայ կեանքին մէջ: Պարթեւն էր որ երկրի ժողովուրդին ու յեղափոխութեան համար պատուհաս մը ըլլալէ դատ՝ վարկարեկ բրաւ Նսն հայ յեղափոխականի անունը հայ ու, յաճախ ալ, օտար հասարակութիւններուն առջև, հարկս գրելով անոնք նայելու հայ յեղափոխական կսգտակերպութիւններուն՝ իրբն աւազակային իմբակցութիւններու վրայ, «Մաֆիայի», «Քամօտայի», «սև ձեռքերու» և «սև հարիւրեակներու» յարանման:

* * *

Յեղափոխական-մակարոյձները՝ որոնք բոյն դրած այլնայլ անկիւններու մէջ՝ կր յամեն հայ աշխատաւոր դասակարգի արիւնր, սգրու կներու պէս անվերջ ծծելով և սակայն, առանց երբէք անով յազենալու, յեղափոխութիւնը հասի խրհդիր ըրած՝ շպիտի ուզեն անոր օձիքը ձգել, քանի որ անկէ կախուած է իրենց գոյութեան հարցը: Անոնցմէ անխղճօրէն ու վայրագօրէն շահագործուող, կեղեքուող հասարակութիւնը ինքը պէտք է բուականաչափ գիտակցութիւն ունենայ՝ իր ձեռքերով իր մարմնէն հետս ցնելու, ու կօշիկի ճղմումով մը պանոնք իսպառ անվնաս դարձնելու համար:

Համերաշխութեան նորագոյն խեղկատակու.

Թիւնը արդէն ինքնին պարզօրէն կը ցուցնէ այդ ինքնագիտակցութեան զարթնումը: Եւ այդ զարթնումին առաջն առնելու համար արդէն հնարուեցաւ անիկա, նոր սրբութիւններու երեւոյթին, նոր սգեորութեան գինովացումին մէջ անգամ մըն ալ թմրեցնելու կուսակցականի փոքրիկ մտածումներու միայն կարող միաքր և զգացումներու ծով մը պատկերացնող մեծ սիրտը:

Մակարոյծ-յեղափոխականները ճիգ ու թիւն ու կեղծիքի արհեստանոց իրենց թերթիկներու միջոցով հասարակութեան հրամցուած համերաշխութեան կարկանդակով՝ հաստատեցին, որ իրենք պէտք ունեցան իրենց գաղափարական խոհանոցի արտադրութիւնները փոխելու: Եւ ինչքան ալ ստոր ըլլար այդ — անկեղծ ու պարզ մարդու մը՝ Մուրատի մը անունին՝ անպարկեշտօրէն շահագործումը, այդ կարկանդակը անուշաւէտ ընելու համար — միշտ ալ սպասելի էր իրենցմէ:

«Երիտասարդ Հայաստան»ը շուկայի մը վայել իր ուէքլամներով, այդ համեստ անհատի ինքնասիրութիւնը վիրաւորելու չսփ, բաւական ծիծաղելի ըրաւ հասարակութեան առջև թէ՛ ինքզինքը, և թէ — որ անպայման ցաւալի է — Մուրատի անհատականութիւնը, իրրեւ սուղ գնով ծախուելիք ապրանքի մը, որ գուցէ ինքնին արժանիք մը չներկայացնելով, պէտքը ունեցաւ հրէայ չէրչիի մը գովասանքներուն: Այդ չէրչիութեան ճիգերէն մէկը պէտք է նկատել անշուշտ, ամերիկեան քանի մը թերթերու կողմէն

Մուրատի Ամերիկա հասնելը աւետող այն լուրը, որ ամենայն լրջմտութեամբ կը հաղորդէր թէ՛ — «Հայոց ժէնէրալ Մուրատ, ամսոյս 6-ին, Նիւ-Եօրք ժամանեց: Մտադիր է Ամերիկա գրտնուող 36.000 հայ գաղթականները զինուորագրել՝ ընդդէմ թիւրք ոչ ժիմի»: — Ապուշութիւն մը, հարկաւ, «Ե. Հ.»-ի գործակալներու կողմէն հաղորդուած միամիտ եանքիներուն:

Ռէքլամները, սակայն, անկարող եղան սնանկացած պիղնէսի մը վարկը բարձրացնելու: Մուրատի Ամերիկա հասնելէն տակաւին ամիսներ առաջ — անցեալ 1907-ի ամառը՝ արդէն շատ բարի տրամադրութիւն մը չէր նկատուեր այդ այցելութեան նախապատրաստական ժողովներու մէջ: Մասնաճիւղային գաղտնի ժողովները, այդ զաւրստեան առթիւ հոյ պատրաստելու համար գումարուած՝ երեւան հանեցին նոյնիսկ թշնամական վերաբերմունք, չարակամ հոսանք մը Հին Հնչակեան Կեդրոնի այդ մտադրութեան դէմ: Այսպէս, մասնաճիւղերէն մէկը, այդ մտքով ունեցած իր երկու ժողովներուն մէջ (քաղաքին անունը չենք յայտարարիր) արդիւնքի մը չհասաւ, քանի որ ներկաներու գերակշռող կարծիքն էր, թէ «մենք սօցիալիստ ենք, իսկ Մուրատը ազգային ազատական գաղափարը հետապնդող մէկը: Ան թո՛ղ հանգիստ նստի իր տեղը. մենք անոր պէտք չունինք»:

Համերաշխութիւնը արդէն ժողովուրդի բերնին մէջ փորձուեցաւ, և ան շի մոռնար երբէք անոր պատճառով զգացած կծկումներն ու գալա-

րուսները: Թոյնը նեկտարի գաւաթին մէջ ալ
թոյն կը մնայ. և համերաշխութիւնը, լորձունքոտ
ու ժահրոտ սրտերու մէջէն քամուած, շի կրնար
նեկտարի վերածուիլ:

Ներկայ համերաշխութիւնը — ո՛չ մէկ տա-
րակոյս կրնայ ըլլալ — նոր դաւերու, գեղծումի,
դրամաշորդութեան նախաշաւիղը պիտի ըլլայ —
իրը ճակատագրական անխուսափելի հետեւողու-
թիւն մը այդ մերձեցման:

Հասարակութեան մէջ այն քանի մը եղկե-
լիներ, որոնք սովոր են հիւանդոտ զգայակա-
նութեամբ ապրելու, առանց ամենեւին իրակա-
նութիւնը ըմբռնել կարենալու, մտքին ու տրա-
մարանութեանը ներդաշնակեցնելու իրենց գոր-
ծառնութիւնները — անոնք, եթէ կ'ուզեն, թո՛ղ
չլանան դարձեալ հին իրազագոյութեան մաշուած
ձեւերէն — գիտակից մեծամասնութիւնը վաղուց
թքած է այդ սիրուն բառերուն վրայ, երբ անոնք
կ'արտասանուին հայ շարիքի մեծագոյն պատճա-
ռը եղող անձերու կողմէ:

Համերաշխութիւնը՝ ընդհանուր ազատագրա-
կան ճիգերու վերջնական, լուսաւոր յաղթանակի
համար՝ անհրաժեշտ ու հրամայողական պահանջ
մըն է, սակայն համերաշխութիւն՝ հայ ցեղի լա-
ւագոյն զաւակներու, անոր գտուած, բիւրեղա-
ցած տարրերու միջեւ:

Հին Հնչակեանութիւնը՝ իրրեւ մեռած մար-
մին մը, իր անարժան պետերու ապիկարութեան
պատճառով, և վերակազմեալութիւնը՝ իրրեւ ա-
ւազակներու որջ մը՝ իրարու հետ համերաշխե-

լով՝ նոյնիսկ հազարաւոր Մուրասներու միջնորդութեամբ՝ ապականութիւնը տիրապետող գործօնը պիտի դարձնեն հայ կեանքին, քանի որ շարիքներու միաւորումէն բարիք չի կրնար ծնիլ։
Բայց ժողովուրդը չպիտի թոյլատրէ սոյն։

* * *

«Յեղափոխութեան» անուան տակ կատարուող խաչագողական շահատակութիւնները հարուստ եւ լուսնայատակով գրուած ներկայ հրատարակութիւնը՝ կը յանձնուի գիտակից հասարակութեան։ Հարկ չկայ ըսելու, որ ան կձուէ և դառն, իրերն ու անձնաւորութիւնները իրենց անուններով կը շեղու պատճառով։

Չարիքի յարատեւումը պիտի ստիպէ հրատարակիչները՝ նորանոր ու հիմնաւոր մերկացումները շարունակելու։



UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY

Los Angeles

This book is DUE on the last date stamped below.

--	--	--

Form L9-Series 4939

UNIVERSITY OF CALIFORNIA
LIBRARY
LOS ANGELES

